ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԵՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

ՀՏԴ 159.9 (07) *DOI: 10.52063/25792652-2023.1.16-109*

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
narine.harutyunyan@ysu.am
ORCID: 0000-0001-7264-2705

ԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
«Ես և մենք» հոգեբանական կրթախորհրդատվական կենտրոնի տնօրեն,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ani.psychologist.barseghyan@gmail.com
ORCID: 0009-0003-1552-4712

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել կնոջ ներընտանեկան դերերի իրացման և սոցիալական զբաղվածության միջև փոխպայմանավորվածությունը աշխատանքից կախվածության պայմաններում: Այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ներկա հասարակարգում, անխուսափելիորեն հանգեցնում են ընտանեկան կարգի փոփոխությունների, որի արդյունքում վերագնահատվում են ընտանեկան արժեքները, դերային կառույցը, պարտականությունների նկատմամբ ամուսինների պատասխանատվությունը և այլն: Այս համատեքստում արդիական են դառնում կնոջ կողմից ընտանեկան կյանքի և ամուսնական հարաբերությունների կարևորության վերանայման հիմնախնդրի ուսումնասիրությունները:

Ակնհայտ է, որ ժամանակակից կնոջ համար կարևոր է նաև սոցիալական ակտիվությունը, ընտանիքից դուրս աշխատանքային, հասարակական զբաղվածությունը, ուստի մեր կողմից կազմակերպվել և իրականացվել է հետազոտություն աշխատող կանանց շրջանում, որի ընթացքում կիրառվել են հուսալիության ու հավաստիության բարձր ցուցանիշներ ունեցող հոգեբանական մեթոդներ:

Համալիր ուսումնասիրության արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ գոյություն ունի տարբերություն աշխատանքից կախվածություն ունեցող և կախվածություն չունեցող կանանց ընտանեկան դերերի իրագործման նկատմամբ պատասխանատվության ու պատրաստակամության միջև: Ընդ որում, պետք է

* Հոդվածը ներկայացվել է 12.03.2023թ., գրախոսվել՝ 17.04.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

ասել, որ ժամանակակից կանայք բավական հաջող համադրում են ընտանեկան դերերի իրագործումը աշխատանքային գործունեության հետ, իսկ աշխատանքից կախվածության պայմաններում ընտանեկան պարտականությունների նկատմամբ համեմատաբար ցածր հավակնությունները արտահայտվում են աշխատանքում հաջողության հասնելու, կարիերայի աճի, նյութական անկախություն ձեռք բերելու կարևորությամբ:

Հիմնաբառեր՝ *ընտանիք, դերեր, պարտականություններ, դերային բաշխում, սոցիալական ակտիվություն, մասնագիտական գործունեություն, հոգեբանական բավարարվածություն:*

Ներածություն

Կնոջ սոցիալական դերի ու դիրքի մշտապես կատարվող փոփոխությունները արդիականացնում են հիմնախնդրի նկատմամբ հետազոտությունների ակտիվությունը: Գրեթե բոլոր ժամանակներում մտածողների, ուսումնասիրողների դիտարկումներն ու վերլուծական միտքը ուղղված են եղել կնոջ դերի ու կարգավիճակի հիմնախնդրին: Ժամանակակից հասարակարգում և հայ իրականության մեջ ևս ակնհայտ է այն հատուկ ուշադրությունը, որը բևեռված է կնոջ սոցիալական զբաղվածությանը, դրա փոխակերպումներին՝ ժամանակակից աշխարհի փոփոխություններին զուգընթաց:

Համաձայն Տ. Վ. Անդրեևայի՝ դեռևս անցած դարի կեսերին բազմիցս խոսվում էր «կնոջ նոր տիպի մասին, որը ձևավորվել է սոցիալ-տնտեսական փոփոխություններով պայմանավորված: Այդ կերպարը կենսունակ արհեստավարժ հաջողակն է, որը միաժամանակ հմայիչ ու գրավիչ է, որպես թույլ սեռ» (Андреева 372): Որքան էլ մատնանշվում են սոցիալական գործընթացների ազդեցության ներքո կնոջ և տղամարդու դերային համակարգերի փոփոխությունները, այնուամենայնիվ, պետք է ասել, որ դա միանշանակ չէ, և ակնհայտ է, որ կնոջ դերի փոփոխությունները ունեն առավել լայն ընդգրկում: Թեև մասնագիտական գործունեությունը նպաստում է ստեղծագործական անձնական ներուժի իրացմանը, անհատական անկախության և ինքնարժեքի զգացողության բարձրացմանը, այդուհանդերձ կրճատում է կնոջ ինքնիրացման հնարավորությունները ընտանիքում, ինչը կարող է հանգեցնել գերբեռնվածության, պարտականությունների ոչ լիարժեք իրականացման կամ դրանց լրիվ անտեսման (Кабайкина, Сущенко 2017): Նման դրսևորումները ընտանիքում կարող են հող նախապատրաստել ներընտանեկան խնդիրների՝ անհամաձայնությունների ու կոնֆլիկտների: Այդ իսկ պատճառով այսօր մի շարք հետազոտողներ կենտրոնացած են կնոջ կողմից մասնագիտական և ընտանեկան դերերի օպտիմալ համատեղման խնդրի վրա:

Հոգեբանական գրականության մեջ հետաքրքրական դասակարգում գոյություն ունի, որտեղ տարբերակում են ընտանիքի և աշխատանքի փոխկապվածության հինգ տիպ: Անկախ տիպ՝ անձի համար աշխատանքն ու ընտանիքը գոյություն ունեն իրարից անկախ, կողք կողքի: Ընդ որում, համաձայն հեղինակների, նման անձինք կա՛մ բավարարված են միայն աշխատանքից, կա՛մ միայն ընտանեկան կյանքից, կա՛մ առհասարակ ո՛չ մեկից, ո՛չ մյուսից բավարարված չեն: Հաջորդ տիպին բնութագրական է կոնֆլիկտայնությունը, մասնագիտական, աշխատանքային հաջողությունները, անպայման, իրենց հետ բերում են ընտանեկան կյանքում զոհողությունների, ինչն էլ թույլ է տալիս ենթադրելու, որ այս անձինք հակված են աշխատանքային կախվածության: Ընտանեկան կյանքի և աշխատանքային զբաղվածության փոխկապվածության երրորդ ձևը կոչվում է «ինստրումենտալ»: Ենթադրվում է, որ աշխատանքը միջոց է ընտանեկան կյանքը բարելավելու,

դարձնելու ավելի հաճելի ու բարեկեցիկ աշխատանքային գործունեության միջոցով: Ըստ հեղինակների՝ աշխատանքը և ընտանիքը կատարում են կոնպենսատոր գործառույթ մեկը մյուսի նկատմամբ: Սա չորրորդ ձևն է, համաձայն որի, եթե անձի կենսագործունեության որևէ ոլորտում, օրինակ աշխատանքային գործունեության ժամանակ, որևէ բան չի բավարարում, ապա անձը վերանայում է իր վերաբերմունքը մյուս ոլորտի՝ ընտանիքի նկատմամբ՝ որպես սեփական հնարավորությունների իրականացման, ինքնիրացման, զարգացման ոլորտի և այլն: Ի վերջո, հինգերորդ տիպը կոչվում է փոխազդեցություն կամ տարածում (spillover), ըստ որի, եթե անձը ապրում է բավարարվածության զգացողություն աշխատանքային գործունեությունից, սա դրականորեն է ազդում, այլ կերպ՝ տարածվում է նաև ընտանեկան կյանքի վրա՝ բարելավելով այն: Իսկ ընտանեկան կյանքից գոհ և բավարարված անձինք միանշանակ հաջողում են մասնագիտության մեջ կամ աշխատանքում: Այստեղ գործում է նաև հակառակ էֆեկտը՝ անհաջողությունները որևէ ոլորտում, անդրադառնում են մյուսի վրա: Համաձայն հեղինակների՝ այս տիպը ևս հակված է ձեռք բերելու կախվածություն աշխատանքից (Берг-Крос 272-273):

Էմպիրիկ հետազոտություն

Վերլուծելով հիմնախնդրին նվիրված հոգեբանական գրականությունը՝ կարող ենք ասել, որ սոցիալական զբաղվածություն ունեցող կնոջ ներընտանեկան դերային իրացմանը նվիրված հոգեբանական և սոցիալ–հոգեբանական ուսումնասիրությունները ունեն տարբեր ասպեկտներ՝ աշխատանքային պայմաններին անձի հարմարման, աշխատող կնոջ բավարարվածության, ընտանեկան և մասնագիտական դերերի համատեղելիության, դերային կոնֆլիկների և կնոջ սոցիալական զբաղվածության, սոցիալական ակտիվության և ընտանեկան կայունության փոխկապվածության տեսանկյունից և այլն (Бучацкая 2006, Гаврилица 1998, Arutyunyan 2022): Իսկ մեր կողմից կազմակերպված հետազոտությունները միտված են բացահայտելու ընտանեկան գործառույթների ու դերային պարտականությունների իրագործման առանձնահատկությունները աշխատանքից կախվածություն ունեցող այն կանանց մոտ, որոնց ներգրավվածությունը աշխատանքում չափազանց բարձր է, ինչպես նաև դուրս բերելու աշխատանքից կախվածության իրական պատճառները:

Հետազոտության ընտրանքը կազմել են թվով 80 կին՝ 25-45 տարեկան, որոնք ունեն մասնագիտություն և լիարժեք աշխատանքային զբաղվածություն:

Հետազոտության նպատակին հասնելու համար մեր կողմից ընտրվել և կիրառվել են հետևյալ մեթոդները.

«Աշխատանքից կախվածության աստիճանի որոշում» (John Bredshaw, 1992): Մեթոդը թույլ է տալիս որոշել կնոջ վերաբերմունքը, նվիրվածությունը աշխատանքին:

Հաջորդը՝ «Դերերի բաշխման մեթոդը ընտանիքում» (Յու. Ե. Այյոշինա և ուրիշներ, 1987) մեթոդն է կիրառվել, որը հնարավորություն տվեց որոշել կնոջը վերագրվող ընտանեկան դերերի իրականացման աստիճանը:

Կիրառված երրորդ՝ «Ամուսնությունից բավարարվածության մակարդակը» (Յու. Ե. Այյոշինա և ուրիշներ, 1987) մեթոդը, բացահայտում է ամուսինների (տվյալ պարագայում կնոջ) ընտանեկան բավարարվածության սուբյեկտիվ մակարդակը:

Ուսումնասիրելով աշխատանքից կախվածության դրսևորման աստիճանը՝ հետազոտական ընտրանքի պարագայում ստացել ենք հետևյալ արդյունքները, ըստ որոնց՝ 62.50% կանայք չունեն աշխատանքից կախվածություն, ինչը նշանակում է, որ նրանց հաջողվում է իրենց ժամանակը, ուժն ու եռանդը համապատասխան բաշխել աշխատանքի, ընտանիքի, մտերիմների և կենսագործունեության այլ ոլորտների վրա: Կանանց 37,50%-ը ունի աշխատանքից կախվածություն, համաձայն որի՝ նրանց չի հաջողվում համապատասխան բաշխել իրենց ժամանակը և ներուժը, որին ի

հետևանք՝ ներընտանեկան դերային գործառույթները և կյանքի այլ ոլորտների պարտականություններ մնում են իրենց կողմից չիրագործված կամ թերի իրագործված: Նրանք ավելի շատ ժամանակ և էներգիա են վատնում աշխատանքի վրա, քան ընտանիքի անդամների, հարազատների, ընկերների, հանգստի ու զվարճանքի և այլն: Աշխատանքից կախվածություն ունեցող կանանց ընտանիքի անդամները և մտերիմները հաճախ են դժգոհություններ հայտնում նրանց չափազանց շատ աշխատելու կապակցությամբ, ինչն էլ թույլ է տալիս եզրակացնելու, որ այս ենթախմբում ընդգրկված կանանց՝ աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը և նվիրվածությունը իրենց կողմից վերանայման կարիք ունի: Ստացված տվյալների համաձայն՝ մեր ընտրանքը բաժանվեց երկու ենթախմբի՝ աշխատանքից կախվածություն ունեցող և աշխատանքից կախվածություն չունեցող կանանց: Համաձայն մեթոդի՝ նորմատիվ համարվում է գնահատման արդյունքների հանրագումարի մինչև 40 միավորը, 40-ից բարձր համարվում է, երբ գնահատողը ունի կախվածություն աշխատանքից: Իսկ առաջին և երկրորդ ենթախմբերի միջինացված ցուցանիշները համապատասխանաբար կազմում եմ M=52.9 (σ=3.1) և M=34.7 (σ=2.6) միավոր:



Նկար 1. *Ընտանեկան դերերի բաշխման տվյալները երկու ենթախմբերում՝ ներկայացված միջինացված ցուցանիշներով (n=80):*

Հավելում. 1-Երեխաների դաստիարակություն, 2-հուզական մթնոլորտը ընտանիքում, 3-ընտանիքի նյութական ապահովում, 4-զվարճանքների կամ հանգստի կազմակերպում, 5-տանտիրուհու դեր, 6-սեքսուալ զուգընկեր, 7-ընտանիքի ենթամշակույթի կազմակերպում

Ըստ տվյալների համեմատության՝ կարող ենք ասել, որ աշխատանքի նկատմամբ չափազանց բարձր վերաբերմունքի ազդեցությամբ ոչ միայն չի հաջողվում համապատասխան և օպտիմալ բաշխել ժամանակը, սեփական ռեսուրսները ընտանեկան և աշխատանքային պարտականությունների վրա, այլև չի հաջողվում, ըստ արժանավույն, իրականացնել ներընտանեկան դերային գործառույթների մեծ հատվածը: Իրենց ժամանակի մեծ մասը հատկացվում է աշխատանքին, մասնագիտական գործունեությանը, իսկ երեխաների դաստիարակությունը, խնամքը, հանգստի ու զվարճանքի կազմակերպումը, ընտանեկան այլ պարտականությունները, որոնք բխում են իր՝ կնոջ և մոր կարգավիճակից, իրականացվում են մասնակի: Այդ են վկայում նաև դիտման և զրույցի արդյունքները՝ նրանց դժվար եղավ համոզել, որ իրենց օրակարգի մեջ հարցմանը մասնակցելու ժամ գտնեն, ոմանք անմիջապես մերժեցին և հետո միայն համաձայնեցին մասնակցել հարցմանը: Նրանք դժգոհում էին հարցերի քանակից և հարցումների լրացման ընթացքում ցուցաբերում էին

շտապողականություն: Նրանք հիմնականում ներընտանեկան դերերի իրագործման պատասխանատվությունը դնում են զուգընկերոջ վրա կամ փորձում են հավասարապես կիսել ամուսնու հետ՝ ձգտելով առավել շատ ներգրավել նրանց սեփական պարտականությունների իրագործման մեջ: Կարծես առավելապես ձգտում են խուսափել ընտանեկան դերային պարտականություններից: Իսկ աշխատանքից կախվածություն չունեցող կանայք համարում են, որ և՛ կինը, և՛ ամուսինը պետք է մասնակից լինեն ներընտանեկան դերային գործառույթների իրագործմանը՝ անկախ նրանց սոցիալական զբաղվածությունից: Այստեղ շատ կարևոր է պատասխանատվության ստանձնումը կնոջ կողմից, այն հավակնությունները, որոնք վճռում են գործառույթների լիարժեք իրագործումը:

Աղյուսակ 1. Կնոջ դերային յոթ ոլորտների միջինացված ցուցանիշներ՝ M_1-աշխատանքից կախվածություն ունեցող և M_2-աշխատանքից կախվածություն չունեցող կանանց ենթախմբերում (n=80)

	1	2	3	4	5	6	7
M_1	2.1	2.0	2.2	2.1	2.0	1.5	2.2
σ_1	0.07	0.16	0.14	0.14	0.11	0.19	0.20
M_2	2.7	2.2	3.3	2.5	2.3	1.8	2.6
σ_2	0.17	0.32	0.28	0.14	0.19	0.39	0.24
T-test	5.4*	1.7	7.5**	3.1	2.5	1.7	2.5

*P<0.001, **P<0.0001

Հավելում. *1-երեխաների դաստիարակություն, 2-հուզական մթնոլորտը ընտանիքում, 3-ընտանիքի նյութական ապահովում, 4-զվարճանքների կամ հանգստի կազմակերպում, 5-տանտիրուհու դեր, 6-սեքսուալ զուգընկեր, 7-ընտանիքի ենթամշակույթի կազմակերպում*

Ըստ Ստյուդենթի չափանիշների՝ երեխաների դաստիարակության և ընտանիքի նյութական ապահովման դերերը ունեն հավասար տարբերություն երկու ենթախմբերի մոտ՝ համաձայն արձանագրված տվյալների:

Այս տվյալների համեմատությունը թույլ է տալիս մեզ ասելու, որ աշխատանքից կախվածություն ունեցող կանայք թեպետ չեն ժխտում երեխաների նկատմամբ ծնողական պարտականությունները, բայց գտնում են, որ երեխաների հետ խաղալ, հոգ տանել, հետևել նրանց վարքին, խնամել ու դաստիարակել կարող են ինչպես ընտանիքի մյուս անդամները, այնպես էլ դայակները և այլն: Այս կանանց մոտ բարձր է նաև վստահությունը այն հասարակական ինստիտուտների հանդեպ, որոնք երեխաների սոցիալականացման, ձևավորման, զարգացման, ուսման գործընթացներին մասնակից են:

Անդրադառնանք ընտանիքի նյութական ապահովման գործառույթի տվյալներին: Աշխատանքից կախվածություն չունեցող կանանց ենթախմբի կողմից արձանագրված միջին ցուցանիշներ՝ M=3.3 (σ=0.28) ընդգծում են այն փաստը, որ հիմնականում իրենց է մտահոգում բնակարանի հարմարավետությունը, կենցաղային պայմանները: Կանայք առավել պատրաստակամ և հոժար են ընտանիքի նյութական ապահովման, հետևաբար առավել բարեկեցիկ պայմաններում ապրելու համար: Կարող են իրականացնել իրենց համար ծանր, երբեմն նաև քիչ հետաքրքիր աշխատանք: Եվ ըստ հարցմանը մասնակցած կանանց, եթե ընտանիքում առաջանան դրամական դժվարություններ, կինը կզբաղվի լրացուցիչ աշխատանք փնտրելով: Սակայն այլ է պատկերը առաջին ենթախմբում՝ M=2.2 (σ=0.14): Տվյալները թույլ են տալիս մեզ ասելու, որ թեպետ կանայք ունեն տարբեր աստիճանի աշխատանքային կախվածություն, այնուամենայնիվ ընտանիքի նյութական բարեկեցության ապահովումը գրեթե չեն համարում իրենց պարտականությունը, չեն կարծում, որ աշխատանքը, մասնագիտական գործունեությունը միայն եկամուտի աղբյուր են:

Ընտանիքում հուզական-հոգեթերապևտիկ ֆոնի միջին ցուցանիշները երկու ենթախմբերում գրեթե նույնն են: Հարցման մասնակցած կանայք կարծում են, որ ընտանիքում «հոգեթերապևտիկ մթնոլորտի» ստեղծումը իրականանում է երկուստեք: Այսինքն, ընտանիքում առկա տրամադրությունը կախված է և՛ ամուսնուց, և՛ կնոջից: Եվ՛ կինը, և՛ տղամարդը պետք է հետևեն ընտանիքի մյուս անդամների ինքնազգացողությանը, հոգեվիճակին, ապրումներին և տրամադրությանը, փորձեն հասկանալ ընտանիքի մյուս անդամներին՝ ստեղծելով ջերմության և ապահովության մթնոլորտ: Ամուսինների միջև առկա են փոխադարձ հուզական հարաբերություններ՝ ուշադրություն, հոգատարություն և նրբանկատություն: Եվ այս գործառույթից չի հրաժարվում հարցմանը ենթարկված կանանց գերակշռող մասը:

Ներընտանեկան դերային համակարգի մյուս գործառույթների պարտականությունների նկատմամբ աշխատանքից կախվածություն ունեցող և չունեցող կանաց հավակնությունները էական տարբերություններ չունեն: Սակայն, այնուամենայնիվ, ընտանեկան հյուրընկալություններ և խնջույքներ կազմակերպելը, տան հարմարավետության ապահովումը, առօրյան ու հանգիստը, ինչպես նաև կենցաղը կազմակերպելը աշխատանքից կախվածություն չունեցող կանանց մոտ համեմատաբար վառ է արտահայտված: Նրանք ավելի մեծ ակտիվություն են դրսևորում ընտանեկան դերերի իրագործման համար, քան այն կանայք, որոնք այս կամ այն չափ աշխատանքից, մասնագիտական գործունեությունից կախվածություն են դրսևորում:

Ի վերջո, ընտանեկան դերային համակարգի՝ ամուսինների ինտիմ սեքսուալ ոլորտին վերագրված ցուցանիշները երկու ենթախմբերում համարվում են ցածր: Ստացված տվյալները փաստում են, որ կանայք դերային պարտականությունների իրագործման ժամանակ դրսևորում են պասսիվություն և ունեն մեծ ակնկալիքներ տղամարդուց և նրա նախաձեռնողականությունից:

Աղյուսակ 2*. Ընտանեկան դերերի իրագործման և աշխատանքից կախվածության կորելացիոն վերլուծություն (n=80)*

1	2	3	4	5	6	7
-0,64*	-0,25	-0,74*	-0,43	-0,39	-0,29	-0,35

Հավելում. *n= 80 – ի համար p < 0.01, r = 0.28 p < 0.001, r = 0.36*

1-երեխաների դաստիարակություն, 2-հուզական մթնոլորտը ընտանիքում, 3-ընտանիքի նյութական ապահովում, 4-զվարճանքների կամ հանգստի կազմակերպում, 5-տանտիրուհու դեր, 6-սեքսուալ զուգընկեր, 7-ընտանիքի ենթամշակույթի կազմակերպում

Համաձայն կոռելյացիոն վերլուծության՝ ուժեղ արտահայտված հակադարձ կապեր են բացահայտվել աշխատանքից կախվածության և հետևյալ ոլորտների միջև՝ երեխաների դաստիարակության, նյութական ապահովության, զվարճանքների և հանգստի: Ընտանեկան ենթամշակույթի և տանտիրուհու գործառույթների իրականացման հավակնությունները թույլ կոռելյացիոն կապ են արձանագրել աշխատանքից կախվածության հետ: Ուշագրավ է ընտանիքի նյութական ապահովման ցուցանիշը, որը փաստում է մեր կողմից զրույցի ժամանակ ստացած տվյալները, ըստ որի՝ կանանց համար գումար վաստակելուց, գումար տուն բերելուց առավել առաջնային պահանջմունք է ինքնահիրացման հարցը: Երբ կայանում են իրենց մասնագիտության մեջ, իրենց տեղը գտնելով սոցիալական միջավայրում, երբ հաջողություններ են գրանցում մրցակցային պայքարում՝ այդ ամենի արդյունքում իրենց զգում են ուժեղ, ապահով և անկախ: Կինը ձգտում է ավելի բարձր դիրքի ու

կարգավիճակի ընտանիքից դուրս, աշխատավայրում՝ իրացնելով իր կարողություններն ու հնարավորությունները:

Այժմ կարող ենք անդրադարձ կատարել այն տվյալներին, որոնք բացահայտում են կնոջ՝ ամուսնությունից բավարարվածության աստիճանը: Այսպես, հարցման ենթարկված կանանց 82,50%-ը բավարարված է իր ամուսնական կյանքից, նրանց մոտ առկա է դրական, կառուցողական դիրքորոշում ամուսնության նկատմամբ, նրանք կարծում են, որ իրենց զուգընկերը բնավորության անցանկալի գծեր գրեթե չունի, և նրա կողքին գտնվելը մշտապես հաճույք է պատճառում, առանց ամուսնու կյանքը կլիներ ոչ լիարժեք: Ըստ նրանց՝ իրենց ընտանիքում տիրում է փոխադարձ դրական հուզազգացմունքային մթնոլորտ, և թե՛ ինքը, թե՛ շրջապատը իրենց ամուսնությունը համարում են հաջողված, իսկ ամուսնալուծության մասին առհասարակ չեն մտածում:

17.50% կանայք ցածր են գնահատում սեփական ամուսնական կյանքի բարեկեցությունը՝ կարծելով, որ իրենց ամուսնական կյանքը ավելի անհաջող է, իրենց զուգընկերոջ մոտ գերակշռում են բնավորության ոչ ցանկալի գծերը: Նրանք ենթադրում են, որ շրջապատը ևս նրանց ամուսնությունը համարում է չհաջողված: Այդ անհատների մոտ առկա է հստակ ձևավորված բացասական դիրքորոշում առհասարակ ամուսնության նկատմամբ՝ ամուսնությունը համարելով անձի պոտենցիալ հնարավորությունները սահմանափակող երևույթ: Նրանք կարծում են, որ իրենց սպասումներն ամուսնական կյանքից արդարացված չեն, և զգացմունքները ժամանակի ընթացքում մարել են, միայն մի շարք պարագաներ են խանգարում նրանց ամուսնալուծության որոշում կայացնել: Սակայն պետք է ասել, որ ընտանեկան կյանքից բավարարվածության պայմանավորվածություն աշխատանքային կախվածության աստիճանից գոյություն չունի, ավելին՝ կոռելյացիոն կապեր հայտնաբերված չեն: Բավարարվածության միջինացված արժեքները երկու ենթախմբերում բավարար բարձր են և քիչ են իրարից տարբերվում: Աշխատանքից կախվածություն ունեցող կանանց ենթախմբում այն կազմում է M=32.9 (σ=3.14), իսկ աշխատանքից կախվածություն չունեցող կանանց ենթախմբում՝ M=34.4 (σ=5.02): Հետևաբար, կարող ենք ասել, որ աշխատող կանաց մասնագիտական գործունեության, աշխատանքից կախվածության երևույթները կամ դրսևորումներ վճռորոշ չեն ընտանեկան կյանքից անձի բավարարվածության համար:

Եզրակացություն

Այսպիսով, թեպետ անձի համար մեծ է ընտանիքի դերը և կարևոր են ընտանեկան դերերով պայմանավորված գործառույթներն ու պարտականությունները, այնուամենայնիվ կարող ենք փաստել, որ աշխատանքից կախվածություն ունեցող կանայք համեմատաբար պասիվ են ընտանեկան դերերը իրագործելու հարցում: Նրանք առաջնահերթությունը տալիս են կենսագործունեության այլ ոլորտների: Աշխատանքից կախվածություն ունեցող կանանց համար գլխավոր են դառնում այն դերերը, որոնք իրականացվում են ընտանեկան միջավայրից դուրս՝ մասնագիտական ոլորտում կամ աշխատավայրում, և ներուժն ու ջանքերը ուղղվում են աշխատանքին՝ ինքնահաստատման, բարձր ինքնագնահատականի և արդյունավետության հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреева, Татьяна. Психология современной семьи. Монография. – СПб,: Речь, 2005, 436 С.
2. Берг-Крос, Линда. Терапия супружеских пар /Перев. С англ. Н. Пассказовой, А. Багрянцевой. – М., Изд-во Инст.-та психотерапии, 2004. 528 С.

3. Бучацкая, Марина. Психологическое благополучие работающих женщин. Автореферат диссертации канд. психол. наук: М. 2006, 26 С.

4. Гаврилица, Оксанна. *Ролевой конфликт работающей женщины*: Дис. ... канд. психол. наук: 19.00.05 : Москва, 1998 185 с. РГБ ОД, 61:99-19/5-2

5. Кабайкина, Ольга, Сущенко, Ольга. Трансформация роли женщины в современном обществе: в семье и на работе Вестник Моск. ун.-та, серия 18, социология и политология, 2017. N 3, с. 140-155

6. Harutyunyan, Narine. *Psychological analysis of the problem of women's social activity in the context of family stability Արդի հոգեբանություն /գիտական հանդես*, N2(11), Եր., 2022, էջ 49-57, DOI 10.46991/sbmp/2022.5.2.049

WORKS CITED

1. Andreeva, Tat'jaana. Psihologija sovremennoj sem'i. SPb,:[Psychology of the Modern Family. Monograph. - St. Petersburg:] 2005 (In Russian)

2. Berg-Kros, Linda. Terapija supruzheskih par /Perev. S angl. N. Passkazovoj, A. Bagrjaancevoj. – Moskva, [Therapy of Married Couples / Perev. From English. N. Passkazova, A. Bagryantseva. - M.,] 2004 (In Russian)

3. Buchackaja, Marina. Psihologicheskoe blagopoluchie rabotajushhih zhenshhin Avtoreferat dissertacii kand. Moskva, [Psychological Well-being of Working Women Abstract of the dissertation of Cand. psychol. Sciences: M.] 2006 (In Russian)

4. Gavrilica, Oksanna. Rolevoj konflikt rabotajushhej zhenshhiny : Dis. ... kand. psihol. nauk : 19.00.05 : Moskva, [Role Conflict of a Working Woman: Dis. ... cand. psychol. Sciences: 19.00.05: Moscow] 1998. (In Russian)

5. Kabajkina, Ol'ga. Sushhenko Ol'ga. Transformacija roli zhenshhiny v sovremennom obshhestve: v sem'e i na rabote. serija 18, sociologija i politologija, N 3, Moskva [Transformation of the Role of Women in Modern Society: in the Family and at Work, series 18, Sociology and Political Science, N3, Moscow], 2017, p. 140-155. (In Russian)

6. Harutyunyan, Narine. Psychological Analysis of the Problem of Women's Social Activity in the Context of Family Stability. Modern psychology /scientific bulletin N2(11), Yerevan, 2022, p. 49-57, DOI 10.46991/sbmp/2022.5.2.049. (in English)

PSYCHOLOGICAL FEATURES OF THE PERFORMANCE OF FAMILY ROLES BY WOMEN INVOLVED IN LABOR ACTIVITIES

NARINE HARUTYUNYAN
YSU Faculty of Philosophy and Psychology,
Department of General Psychology,
Ph.D. in Psychology, Associate Professor ,
Yerevan, the Republic of Armenia

ANI BARSEGHYAN
«I and We» psychological educational counseling center, director,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to study the interdependence between the features of the performance of family roles and the social activity of women involved in labor activities. Modern social and public transformations inevitably lead to changes in the structure of family relations, as a result of which there is a reassessment of family values,

role structure, responsibilities and duties of spouses, etc. In this context, studies of the issue of revising a woman's attitude to family life and marital duties become relevant.

Obviously, social activity, labor activity and public employment are also important for a modern woman, so we organized and conducted a study among working women, during which psychological methods were used with high validity and reliability.

As a result of a comparative analysis of the results of a comprehensive study, it can be concluded that there is a difference between the responsibility and readiness to fulfill family roles of women with labor dependence and independent women. At the same time, it should be noted that modern women quite successfully combine the realization of family roles with work activities, and in conditions of work dependence, relatively low ambitions for family responsibilities are expressed in the importance of achieving success at work, career growth, and gaining material independence.

Keywords: *family, roles, duties, role distribution, social activity, professional activity, psychological satisfaction.*

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ИСПОЛНЕНИЯ СЕМЕЙНЫХ РОЛЕЙ ЖЕНЩИНАМИ, ВОВЛЕЧЕННЫМИ ТРУДОВУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ

НАРИНЕ АРУТЮНЯН
доцент кафедры общей психологии
факультета философии и психологии
Ереванского государственного университета
кандидат психологических наук,
г. Ереван, Республика Армения

АНИ БАРСЕГЯН
директор психолого-образовательного
консультационного центра «Я и Мы»,
г. Ереван, Республика Армения

Целью данной статьи является исследование взаимозависимости между особенностями исполнения семейных ролей и социальной активностью женщин, вовлеченных в трудовую деятельность. Современные социальные и общественные трансформации неизбежно ведут к изменениям в структуре семейных отношений, в результате чего происходит переоценка семейных ценностей, ролевой структуры, ответственности и обязанностей супругов и т. д. В этом контексте становятся актуальными исследования вопроса пересмотра женщиной отношения к семейной жизни и супружеским отношениям.

Очевидно, что социальная активность, трудовая деятельность, общественная занятость также важны для современной женщины, поэтому нами было организовано и проведено исследование среди работающих женщин, в ходе которого использовались психологические методы с высокой достоверностью и надежностью.

В результате сравнительного анализа результатов комплексного исследования можно сделать вывод о том, что существует разница между ответственностью и готовностью к выполнению семейных ролей женщин с трудовой зависимостью и независимых от трудовой деятельности. В то же время следует

отметить, что современные женщины достаточно успешно совмещают реализацию семейных ролей с трудовой деятельностью, а в условиях трудовой зависимости относительно невысокие притязания на семейные обязанности выражаются через осознание важности достижения успеха на работе, карьерного роста и обретение материальной независимости.

Ключевые слова*: семья, роли, обязанности, ролевое распределение, социальная активность, профессиональная деятельность, психологическая удовлетворенность.*